Ամերիաբանկ ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) «Հրավիրիր ընկերոջդ» արշավի պայմաններ (այսուհետ՝ Արշավ)

1.1. Բանկի այն հաճախորդները (այսուհետ՝ Ուղղորդող), որոնք 2026թ. մարտի 8-ից մինչև ապրիլի 7-ը ներառյալ (այսուհետ՝ արշավի գործողություն) «Հրավիրիր ընկերոջդ» ուղղորդման ծրագրի շրջանակում MyAmeria հավելվածից «Հրավիրիր ընկերոջդ» ֆունկցիոնալի միջոցով կուղղորդեն Բանկի հաշվետեր հաճախորդ չհանդիսացող այլ ֆիզիկական անձի (այսուհետ՝ Ուղղորդվող) հեռավար եղանակով դառնալ Բանկի հաճախորդ, բացել հաշիվ և պատվիրել Mastercard Standard տեսակի քարտ (այսուհետ նաև՝ Հաջողված ուղղորդում): Եթե Արշավի գործողության ավարտից հետո Ուղղորդողի Հաջողված ուղղորդումների քանակը **5 և ավելի է**, մինչև 2026թ. ապրիլի 17-ը ներառյալ Ամերաբանկ ՓԲԸ-ում բացված իր բանկային հաշվին կստանա 5,000 ՀՀ դրամի չափով խրախուսման վճար հինգերորդ և յուրաքանչյուր հաջորդ Հաջողված ուղղորդման համար (ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը ներառված չեն):

1.2. Արշավի մասնակցիները՝ Ուղղորդող և Ուղղորդվող, մասնակցում են iPhone 17 Pro-ի խաղարկության[1] (այսուհետ նաև՝ Խաղարկություն)՝ յուրաքանչյուր Հաջողված ուղղորդման համար մասնակիցներին տրամադրվող պրոմո կոդերի միջոցով: Խաղարկության համար նախատեսված պրոմո կոդերը ուղարկվում են մասնակիցների Բանկին տրամադրած էլ. փոստի հասցեին արշավի ամփոփման ժամանակ:

Արշավի պայմանները կիրառելի են, եթե պահպանված են ստորև պահանջները.

- Հրավիրվողը Բանկի հաճախորդ պետք է դառնա և պատվիրի **Mastercard Standard** հեռավար եղանակով՝ հրավերի արդյունքում գրանցվելով SMS հաղորդագրությամբ ստացված հղմամբ,
- Հրավիրողը պետք է հրավերն ուղարկած լինի առավելագույնը մինչև ապրիլի 7-ը ներառյալ,
- Հրավիրվողը պետք է Բանկի հաճախորդ դառնա և պատվիրի Mastercard Standard տեսակի քարտ 2026թ. թվականի մարտի 8-ից մինչև 2026թ. ապրիլի 7-ը ներառյալ,
- Խրախուսման վճարի ստացման համար հրավիրողը պետք է ունենա 5 և ավել հաջողված ուղղորդում,
- Արշավի ամփոփման պահին՝ **ապրիլի 17-ի դրությամբ**, Ուղղորդողը և Ուղղորդվողը պետք է հանդիսանան Բանկի հաշվետեր հաճախորդ,
- Հրավիրվողը չպետք է լինի **2025թ. հունիսի 1-ից հետո** Բանկի հետ գործարար հարաբերությունը դադարեցրած և Արշավի շրջանակում վերսկսած հաճախորդ:

---

[1] Խաղարկությունն իրականացվում է օնլայն վիճակահանության միջոցով՝ նախապես անցկացման օրվա մասին 1 շաբաթ առաջ մասնակիցների էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող հաղորդակցման միջոցով: Հաղթող մասնակիցը կծանուցվի Բանկում գրանցված իր էլ. հասցեի միջոցով: